«ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ _____ 2018 թվականի N ___ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 384-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով՝ Կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին N 384-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առողջապահության նախարարին, Գյուղատնտեսության նախարարին, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին, Տարածքային կառավարման և զարգացման նախարարին, Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարին, Ոստիկանության պետին, Քաղաքաշինության կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները՝ դրանք նախապես համաձայնեցնելով Արտակարգ իրավիճակների նախարարության հետ։».

2) որոշումը լրացնել հետևյալ բավանդակությամբ 3-րդ կետով.

«3. Մարզպետներին (առաջարկել Երևանի քաղաքապետին)՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել քաղաքացիական

պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները՝ դրանք նախապես համաձայնեցնելով Արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ:.

3) որոշման հավելվածի 2-րդ կետի ստեղծվում են բառից հետո լրացնել ,համապատասխան բազայի առկայության դեպքում, բառերը.

4) որոշման հավելվածի 4-րդ կետում՝

ա. ա) ենթակետի «կապի և ազդարարման» բառերը փոխարինել «կապի» բառով,

բ. զ) ենթակետի «էներգետիկայի և լուսաքողարկման» բառերը փոխարինել «էներգետիկայի» բառով,

գ. վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և կազմակերպություններում ստեղծվող՝ նշված ծառայությունների տեսակները որոշվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ ելնելով դրանց խնդիրներից և գործունեության առանձնահատկություններից:».

5) որոշման հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները դասակարգվում են՝

ա) հանրապետականի,

բ) մարզայինի,

գ) համայնքայինի,

դ) օբյեկտայինի:

Քաղաքացիական պաշտպանության հանրապետական ծառայությունը ստեղծվում է տվյալ բնագավառի համապատասխան լիազորված պետական մարմնում՝ ներգրավելով ոլորտում գործող կազմակերպությունները (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից):

Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունները ստեղծվում են համապատասխան մարզպետարանների և պետական մարմինների տարածքային ստորաբաժանումներում՝ ներգրավելով տվյալ ծառայություններ մատուցող կազմակերպությունները (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) կամ դրանց մարզում գործող ստորաբաժանումները:

Քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունները ստեղծվում են համայնքապետարաններում և պետական մարմինների

համապատասխան ստորաբաժանումներում, ինչպես նաև տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) կամ դրանց համայնքում գործող ստորաբաժանումներում:

Քաղաքացիական պաշտպանության օբյեկտային ծառայությունները ստեղծվում են կազմակերպություններում:».

6) որոշման հավելվածի 9-րդ կետում՝

ա. «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը»,

բ. «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) քաղաքացիական պաշտպանության անհրաժեշտ կազմավորումների ստեղծման, դրանց անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով ապահովման, պատրաստման և մշտական պատրաստականության վիճակում պահպանման կազմակերպումը.».

7) որոշման հավելվածի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«10. Ըստ նշանակության՝ քաղաքացիական պաշտպանության ծառայությունների խնդիրներն են՝

ա) կապի ծառայության գծով՝ կառավարման մարմինների և բնակչության ազդարարման օժանդակումը, ռազմական դրության ժամանակ կառավարման մարմիններին կապով ապահովման նպատակով՝ մասնագիտացված կազմակերպությունների հետ անհրաժեշտ համագործակցության իրականացումը.

բ) ինժեներական ծառայության գծով՝

հակառակորդի հարձակման վտանգի կամ հարձակման ժամանակ բնակչության պատսպարման նպատակով պաշտպանական կառույցների վաղօրոք նախապատրաստման, պահպանման. շահագործման և վերանորոգման միջոցառումների կազմակերպումը,

պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրումը,

քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների նպատակահարմար տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների

շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովման կազմակերպումը.

գ) բժշկական ծառայության գծով՝

հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովման, տուժած բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը,

շրջակա միջավայրի, խմելու ջրի աղբյուրներում և համակարգերում ջրի որակի վիճակի ու վարակվածության դիտարկման և հսկողության իրականացման կազմակերպումը,

հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

դ) տրանսպորտային ծառայության գծով՝ բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների տրանսպորտային ապահովման կազմակերպումը.

ե) առևտրի և սննդի ծառայության գծով՝ տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովման կազմակերպումը,

սննդամթերքի անվտանգության, որակի ու վարակվածության դիտարկման և հսկողության իրականացման կազմակերպումը.

զ) էներգետիկայի ծառայության գծով՝

էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորման ու իրականացման կազմակերպումը,

էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը,

գազամատակարարման ապահովման կազմակերպումը.

է) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության գծով՝

գյուղատնտեսական կենդանիների և բույսերի, անասնաբուծական ու բուսաբուծական արտադրանքի, պաշտպանության միջոցառումների համակարգումը,

վտանգավոր տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման

աշխատանքների կազմակերպումը.

ը) հասարակական կարգի պահպանման ծառայության գծով՝

ռազմական դրության ժամանակ քաղաքներում և այլ բնակավայրերում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում ու տրանսպորտային մայրուղիներում հասարակական կարգի պահպանման ապահովումը, գույքի պահպանումը, ինչպես նաև տարահանված բնակավայրերում և օբյեկտներում մնացած գույքի պահպանության իրականացումը,

ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը.

թ) նյութատեխնիկական մատակարարման ծառայության գծով՝ փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների նյութատեխնիկական անհաժեշտ միջոցներով ապահովման կազմակերպումը.

ժ) կոմունալ-տեխնիկական ծառայության գծով՝

ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կայունության բարձրացման միջոցառումների պլանավորումն ու իրականացումը, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

ժա) բնակչության հատուկ սպասարկումների ծառայության գծով՝ բնակչության շրջանում անվերադարձ կորուստների հաշվառման, դիակների հուղարկավորման աշխատանքների կազմակերպումը։».

8) որոշման հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պատրաստականության գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր տարում անցկացվող քաղաքացիական պաշտպանության հրամանատարաշտաբային և շտաբային ուսումնավարժությունների ընթացքում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ